

Հայաստանի գրողներու միութեան նախագահ
Լեւոն Անանեանի Մատենախօսութիւնը
Հայր Լեւոն Զեքիեանի
«Հայապտում»ի շնորհահանդէսին

Ամէն նոր գրքի ծնունդ, մանաւանդ համատարած ոգեգրկութեան մեր ժամանակներում, ինքնին իրադարձութիւն է, իսկ եթէ նոր գիրքը լոյս է տեսել Հայր Լեւոն Զեքիեանի հեղինակութեամբ, կարելի է վստահօրէն ասել, որ գործ ունենք մշակութային իրադարձութեան հետ:

«Հայապտում»ը, իսկապէս մի տպաւորիչ խճանկար է, խճանկար՝ զօղուած սիրոյ եւ ոգու շաղախով, որի գունագեղ խիճերը ոչ միայն չեն խճողում պատումի ամբողջականութիւնը, այլեւ իւրաքանչիւրը իր գոյնը բերելով՝ միասնաբար վերակերտում են մեր ազգային հաւաստի դիմապատկերը՝ իր լոյս եւ ստուերով:

Եւ որքան էլ հատորը առաջին հայեացքից թեմատիկ ընդգրկման առումով տառասեռ թուայ (գիտական յօդուած եւ գրախօսութիւն, ակնարկ եւ ուղեգրութիւն, դամբանական, գրոյց, յուշեր) – ամէնուր իշխում է միասնական գաղափարը, այն է՝ մի թելի վրայ սարադրել եւ ի ցոյց դնել հայոց ազգային ինքնութեան արմատները, որպէս ազգապահպանման հօգի կռուան:

Կարդում եւ գիրքը, եւ ակամայ աչքիդ առաջ յառնում է մեր միջնադարեան հռչակաւոր դէմքերից մէկը՝ մանրանկարիչ եւ ճարտարապետ Մոմիկը, որին ժամանակակիցները կոչել են բազմաշնորհ Մոմիկ: Այս գուգորդութիւնը անհիմն չէ, քանզի բազմաշնորհ մակդիրը շատ է յարմարում «Հայապտում» ժողովածուի հեղինակին, որի հարուստ գիտելիքներն ու վարպետ շարադրանքը ծաւալում են ամենատարբեր ժանրերով եւ ամենաբազմազան թեմանների շուրջ:

Գիրքը պայմանականօրէն բաժանուած է 9 մասերի (խոհեր, վերապրումներ, դեգերումներ, դիմաստուերներ, եւայլն), որոնց աշխարհագրութեան շառաւիղները ձգում են դէպի Սփիւռքը տարբեր գաղթօճախները, ի հարկէ, հիմնուելով մայր հայրենիքի առանցքին վրայ: Անխտիր բոլոր հրապարակումներում ձգողութեան լիցքերը ուժաւորում են հայը, Հայաստանը, հայրենին, հայերէնը, շերտաւորելով մնայուն կամ անցողիկ արժեքների մի բազմաբուրգ պրիսմակ, որի ամէն նիստը համազգային որեւէ մտահոգութեան ճշգրիտ արտացոլանքն է:

Ինձ համար հաճելի եւ անակնկալ բացայայտում էր Հայր Լեւոնի գրական օժտուածութիւնը: Ճամբորդական նոթերը հաստատում են ճշմարիտ հրապարակագրին՝ սուր դիտողականութիւնը, նուրբ ճաշակ, բնանկարի թանձր վրձնահարուածները, բնորոշը երկրորդականից զատելու, փաստերն ու երեւոյթները ընդհանրացնելու բացառիկ հմտութիւն:

Բնաւ չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք, որ նրա գրիչը տեղ-տեղ ներխուժում էքեղարուեստական արձակի կալուածները, ինչպէս «Գեղարդի Նուռը» գողտրիկ պատկերն է՝ իր այլաբանական իմաստով. «Գեղարդի նուռն էր ատիկա, սեղանիս վրայ: ...Անոր կրակէ հատիկներուն մէջէն կը հոսէր պատմութիւնը՝ զոր կը փնտռէի, յիշատակներուս աւիշը՝ ժամանակի յորձանքին յաղթելու չափ թարմ եւ կենսատոյգ»: Ինչպէս «Բազմադարեան նուագ, մշտանորոգ արձագանգ» փայլուն ձօներգութիւնը, Մեսրոպեան գրերին, յոյզի ու հիացումի կատարեալ խտացում, որից չեմ կարող զսպել գայթակղութիւնս՝ մի հատուած մէջբերելու.

«Երգ մը կը բխի դարերու ընդերքէն:

Երգ մը՝ խորհրդաւոր եւ հօր, աղէխարշ եւ զգլխիչ»:

Երգը՝ բիրիւական գետերով ակօսուած մայր հողին, երգը՝ վայրագ հովերու օրօրած դաշտերուն: Հայրենի ձիւնաբարձ կատարներուն նման սլացիկ, լեռնալիճերու կապոյտին պէս վճիտ: Մերթ արիւնտտ արցունքներուն այրող հետքերով, ու մերթ դափնեվարդերու բոյրին օծութեամբ:

Երգ մը՝ որ կը մագլցի դարերն ի վեր, գերդ ղօղանջ աւետիսի եւ որբութեան, գերդ ղօղանջուսոյ եւ ներման, գերդ ղօղանջ հսկման եւ յայտնութեան, գերդ ղօղանջ թաղման եւ յարութեան:

Առանձին շարք են կազմում գրքում ժողովուած խմբագրականները: Այս հանգամանքը յատուկ շեշտադրում ենք՝ յիշելով ու յիշեցնելով, որ այսօր թէ Սփիւռքում եւ թէ Հայաստանում չափանիշների առումով քննութիւն չի բռնում: Յընթացս փաստելով, որ ինչպէս «Հայ Ընտանիք» պարբերաթերթին, այսպէս էլ «Բազմավեպ»ին աշխատակցելիս Հայր Լեւոնն իրեն դրսեւորել է որպէս լայնախոհ խմբագրապետ, որդեգրելով հետեւեալ դրուատելի ելակետը՝ հայագիտական տպագիր խօսքի զօրութիւնն ու զօրեղութիւնը, Միխիթարեանների հարկի տակ իսկ, հնարաւոր է ապահովել՝ հեղինակային աքթի մէջ համախմբելով ժամանակի կրօնական եւ աշխարհիկ բոլոր կարող ուժերը: Սովորաբար մամուլի հրապարակումները կարճակեց են, պատկերաւոր ասած՝ թիթեռի կեանք ունեն: Մինչդեռ Լեւոն Զեքիեանի խմբագրական յօդուածները, որոնք գրուել են սրանից երեք տասնամեակ առաջ, ցայսօր չեն կորցրել իրենց թարմութիւնն ու այժմեականութիւնը՝ Ս. Ղազարի հայաւանդ գանձերը ոչ իբրեւ թանգարային նմոյշ, այլ «կենսասականօրէն» պահպանելու յորդորը, միջազգային հայագիտական ընկերութիւն ստեղծելու ծրագիրը, ահագնացող արտագաղթի պայմաններում «Եղբայր եմք մեք» պատգամին փարելը, ազգային արժէքները աշխարհին թարգմանաբար ներկայացնելը, եւայլն, եւայլն: Այս շարքը վկայում է հեղինակի վերլուծական մտքի խորութեան մասին, արմատական երեւոյթների զարգացման ուղիները հեռանկարի մէջ կանխագուշակելու, նաեւ մատը համազգային այն վերքերի վրայ դնելու կարողութեան մասին, որոնց դարմանումը որքան էլ տեւական լինի, բախտորոշ դերակատարութիւն ունի հայ ինքնութիւնը պահպանելու, ժողովրդի յարատեւման եւ հայատեւման կամքը բորբոք պահելու գործում:

Սակայն որքան էլ բարեբանենք Հայր Լեւոնի ներդրումը մեր հոգեւոր մշակոյթի այս կամ այն մարզում, նրա նախընտրութիւնը գիտական արգասաւոր գործունէութիւնն է, ուստի եւ պատահական չէ, որ նա այն սակաւաթիւ հայագետներից է, ում վաստակը հայրենիքը գնահատել է ըստ արժանւոյն՝ ընտրելով Ազգային Ակադեմիայի պատուոյ անդամ: Հայագիտութեանը մատուցած նրա ծառայութիւններին անտեղեակ մէկը կարող է ծանօթանալ գրքի շապիկին զետեղուած կենսագրականից՝ հարիւրից աւելի գիտական յօդուածներ եւ շուրջ 15 մենագրութիւններ տարբեր լեզուներով: Այս գնահատելի ժառանգութեան մէջ առանձնայատուկ տեղ եւ դեր ունեն մեր գաղթօճախների ուսումնասիրութիւնները, մասնաւորաբար հայ-իտալական մշակութային կապերի համակողմանի քննութիւնը:

Զինուած Միխիթարեան հայերի մեղուաջան աշխատասիրութեամբ, պրպտելու մեծաթիւ սկսբնաղբիւրներ, Հայր Լեւոնը լիովին սպառում է նիւթը՝ հարթելով ապագայ հայագետների ճանապարհը՝ աշխարհասփիւռ մեր միւս գաղթօճախների պատմութիւնը ամբողջացնելու, նրանց երկրորդ արդէն գրոց կեանքը պարգեւելու համար:

Մեր գնահատականը գրքին թերի կը լինէր, եթէ անտեսէինք մի իրողութիւն, որն օրըստօրէ համագային տագնապի, եթէ չասենք՝ աղէտի առիթ է դառնում: Խօսքը ուղղագրութեան շուրջ թեժացող արմուկի մասին է, որ գլորուող ձնագնդիկի նման թափ ու ծաւալ առնելով՝ պատուահասում է երկու հատուածների միասնականացման ջանքերին՝ ակամայ ջուր լցնելով մեր դարաւոր թշնամիների ջրադացին: Հայերէնի ուղղագրութեան հարցը հաւասարապէս եւ նոյն անզիջում յամառութեամբ շահարկում է եւ Սփիւռքում, եւ Հայաստանում: Այս իրողութիւնը թերեւս կարելի է հասկանալ եւ արդարացնել: Կան սզբունքային խնդիրներ, որոնք կանխորոշում են ազգի յետագայ ճակատագիրը, եւ նման դէպքերում զիջողութիւնը կամ նահանջը կարող են յանգել անդառնալի կորուստների: Բայց անկարելի է հասկանալ կամ արդարացնել այն հաշտ, թշնամական ատելութիւնը, որ հայ գրագետը տածում է լեզուական խրամատի հակառակ կողմում դիրքաւորուած հայ գրագետի նկատմամբ եւ մանաւանդ այն զինանոցի առկայութիւնը, որի գործադրումը ՄԱԿը պիտի արգելէր իբրեւ ազգակործան պատերազմի միջոցներ: Եւ իմ մէջ օրօրի արմրապնդում է կասկածը, թէ բեմառաջքում ծաւալուող այս ջլատող պայքարը ղեկաւարում են ինչ-ինչ մութ ուժեր, ովքեր քուլիսների ետեւից բորբոքում են հակամարտութեան կրակը:

Այս հենքի վրայ գերապատուելի Հայր Լեւոնի հաւասարակշիռ մօտեցումը՝ համագային տարածքով մշակել լեզուական այնպիսի քաղաքականութիւն, որ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի միջեւ չխորանայ ջրբաժանը, նոր պատնէշները չբարձրանան:

Թերեւս սա էլ միակ եւ վերջնական դեղատոմսը չէ, եւ հարցի լուծումը թողնում է առկախ, սակայն ծուղակից դուրս գալու անցաւագին ելքի փնտռտուք է, երբ հիւանդութեան ախտանիշերը սրում են, եւ այլեւս անկարելի է խուլ ու համրի կեցուածք ընդունել: Երկու ուղղագրութիւնների առժամանակ խաղաղ գոյակցութեան իր յորդորով Հայր Լեւոն մղում է մեզ խոհեմաբար օգտուել պատմութեան դասերից (որ դժբախտաբար հայոց համար բախտորոշ սխալների հանրագիտարան է), կառչել ոչ թէ տարանջատող, այլ միաւորող յենասիւններից:

Առանց էլ ազգային գոյապահպանութեան կենսականօրէն հրատապ խնդիրները դէմ են առել անյաղթահարելի թուացող ցորցորատների եւ մեր բնաշխարհիկ մշակոյթի պարապ խոռոչները օտարամուտ մասնիկներով լցնելու համառ եւ աներես փորձեր է անում համաշխարհայնացման խորշակը, որը նոր դարում փոքրաթիւ ժողովուրդների ինքնութեան գլխին կախուած է դամոկլեան սրի ահաքնութեամբ, եւ դիմակայութեան որոնէ կոչ արձագանգ չի գտնի, եթէ չամրապնդուի կոնկրետ գործով, ինչին լծուած է Լեւոն Զեքիեանը՝ նաեւ որպէս գիտութեան ու մշակոյթի հայապահպան նախաձեռնութիւնների հեղինակ ու կազմակերպիչ: Հանրայայտ են նրա անուրանալի ջանքերը հայագիտական սիմփոզիումների, հանդիպումների, կետորոնների կազմակերպման մարզում, որոնցից մէկն էլ արդէն 17 տարուայ կենսագրութիւն ունեցող հայոց լեզուի եւ մշակոյթի ամառնային խտացեալ դասընթացքներն են Վենետիկում: Միշտ այսպէս՝ վաղանցիկ խօսք ու խրատի փոխարէն գործնական քայլեր՝ գորնական արդիւնքներով: Այսպէս է հասկանում Հայր Լեւոնը ճշմարիտ հայրենասիրութիւնը, դարասկիզբի հոգեւոր քառսի մէջ ներդաշնակութիւն հաստատելու ճիգը, առանց հարահրոցի, առանց արածը եղէգնեայ կամ պղնծեայ փողով տարփողելու, առանց իր անձն ու գործը ուրիշի աչքը խոթելու: Հազուագիւտ մի տիպար մեր օրերում, որի բանաձեւումը գտնում ենք գրախօսուող գրքի էջերում. «Պատմութեան եւ իր սեփական մշակոյթին գիտակից հայ մարդը պիտի կերտէ իր ժամանակին հայ մշակոյթը

հինէն դէպի նորը փախակերպումով, ձգտելով դառնալ ի՛նքը գիտակից ղեկավարը այն տրամասութեան՝ որով աւանդը կ'ըլլայ յղացքը եւ յղացքը ժողովուրդի մը հոգին»:

Հարկ է առանձնայատուկ շեշտել Հայր Լեւոնի գործունէութիւնն մի կարեւոր կողմը, որ կապուած է գիտնականի (գիտութեան) բարոյականութեան հետ: Ամէն անգամ նա գրիչ է վերցնում իր ժողովրդի ազգային ինքնութեան արմատների վերահաստատման ազնիւ մղումով, եւ եթէ հարցը տանում է փակուղի, եթէ հարցը յանգում է բազմընտրանքի խաչմերուկի, գիտնական առաջնորդում է միայն ու միայն ազգային շահի գերակայութեամբ:

«Հայապատում»ի էջերը լեցում են ազգային համախմբման ծրագրերով, հատուածականութիւնը հոգեւոր կամուրջներով միասնացնելու առաջարկներով: Այդ ծրագրերից մէկը՝ Հայաստան-Սփիւռք համաժողովները, արդէն իսկ կեանքի է կոչուել: Թէպէտ տակաւին պղտոր ու անորոշ, բայց գործնականօրէն զուլալուելու հեռանկարով: Վստահ եմ, որ մօտ ապագայում պիտի իրականանայ Հայր Լեւոնի միւս երազանքը՝ համասփիւռքային ազգային մարմին ստեղծելու գաղափարը: Մարմին, որ վեր լինի խմբային, յարանուանական, ընկերային շահերից եւ շահագրգռութիւններից, որ համերաշխութեան ու միասնութեան իր քարոզով հայութեանը կոչի ապրելու ոչ թէ ընդդէմ, այլ յանուն ապագային:

Իսկապէս, յոյժ կարեւոր գաղափար, մանաւանդ եթէ նկատի առնենք, որ Սպիտակի աղէտին յաջորդած հոգեւոր երկրաշարժի փլուածքների տակ մնացած շատ արժեքների հետ աւերակուեց նաեւ Սփիւռքահայութեան հետ մշակութային կապերի կոմիտէն, առանց ժառանգորդի:

Չեմ կարող շրջացնել նորատիպ գրքի մի գեղեցիկ երեսը եւս, որ ցոլացնում է հեղինակին որպէս հմուտ գրականագէտ-վերլուծաբանի: Տասնամեակների ընթացքում ծով գրականութիւն է ստեղծուել գրական կուռքերի՝ Խորենացու, Նարեկացու, Դուրեանի, Վարուժանի մասին, որ չափազանց դժուար է նոր խօսք ասել: Սակայն այստեղ եւս Հայր Լեւոնը մատուցում է ինքնատիպ բանալի՝ նորովի բացելով մեր անցեալի ժառանգութեան անանց հմայքը: Մատուցում է այնպիսի ճոխ լեզուով ու շքեղ ոճով, որի ակունքներում մեր ոսկեմատեանների աւանդոյթն է: Եւ ամենուր, գրքի բոլոր էջերում քեզ ուղեկցում է հեղինակի կերպարը՝ մտահոգ, մտաւորական, ազգանուէր: Իւրաքանչիւր հայ մարդ արարում է իր հայապատումը: Լեւոն Ջեփիեանի «Հայապատում»ն էլ հեղինակի կեանքն է՝ ընդլուզուած հայոց մեծերի դասերին եւ ազգային հիմնահարցերի տարողութեանն ու կշռին:

...Երեւանից մեկնելուց առաջ այցելեցի Սիլվա Կապուտիկեանի, որ վերջերս թեթեւ կափուած է տարել: Տեղեկանալով, որ պիտի հանդիպիմ Հայր Լեւոնի, դեռեւս չապաքինուած ձեռքով բանաստեղծուհին իր նոր հատորը, որ համեստօրէն վերնագրել է «Իմ Կածանը Աշխարհի Ճանապարհներին», մակագրեց. ընդամենը սեղմ ու տարողունակ մի քանի բառ. «Մեծարգոյ Հայր Լեւոն Ջեփիեանին, հայ մշակոյթի անձնագոհ նուիրեալին»: Ի՞նչ կարելի է յաւելել արեւելահայ դասական քնարերգութեան վերջին մոհիկանի ապառիչ բնութագրին: Իբրեւ ամփոփում կ'ուզենայի սոսկ նշել, որ իր «Հայապատում» հատորով հեղինակը եւս մի մնայուն ակօս է բացել հայագիտութեան խտաբնակ անդաստանում այն խորագնայ կածանին, որ ամենայն իրաւամբ կրում է Հայր Լեւոն Ջեփիեանի անունը: